


**Հայաստանի Հանրապետությունում գործող բանկերի 2007 թ.-ի առաջին կիսամյակի գործունեության արդյունքները «ԱրՔա» վճարային համակարգի շրջանակներում**

Հայաստանի Հանրապետությունում գործող բանկերից 20-ը թողարկում և սպասարկում է պլաստիկ վճարային քարտեր, որից 18 առևտրային բանկեր անդամակցում են «ԱրՔա» միասնական վճարային համակարգին, 7-ը՝ VISA և 12-ը՝ MasterCard միջազգային վճարային համակարգերին, որոնց կողմից թողարկվում և սպասարկվում են նշված վճարային համակարգերի քարտեր:

2007 թ-ի առաջին կիսամյակի ընթացքում «ԱրՔա» վճարային համակարգի անդամ բանկերի (այսուհետ Համակարգ) կողմից մատուցվող քարտային ծառայությունների մասով նախորդ տարվա նույն ժամանակամիջոցի համեմատ զգալի աճ է գրանցվել գրեթե բոլոր հիմնական ցուցանիշների գծով: Հաշվետու կիսամյակի ընթացքում Համակարգի անդամ բանկերի կողմից թողարկվել է 49,517 քարտ, այդ թվում՝ 27,682 ArCa, 16,199 VISA և 5636 Master քարտեր, որը նախորդ տարվա նույն ժամանակամիջոցում թողարկված ընդհանուր քարտերի քանակը գերազանցել է 9,719 քարտով կամ 24.4 %-ով, ընդ որում թողարկված ArCa քարտերը գերազանցվել է 4,791 քարտով կամ 20.9 %-ով, VISA քարտերը՝ 2,644 քարտով կամ 19.5 %-ով, իսկ Master քարտերը 2,284 քարտով կամ 68.1 %-ով (2006 թ.-ի I կիսամյակի ընթացքում թողարկվել է ընդամենը 39,798 քարտ, այդ թվում 22,891 ArCa, 13,555 VISA և 3,352 Master քարտեր): Տեղին է նշել, որ հիշյալ քարտերի մոտ 81.3 %-ը կամ 40,241 քարտ թողարկվել է վեց բանկերի կողմից՝ ԱԿԲԱ-Կրեդիտ Ագրիկոլ Բանկի (8,974 քարտ), Հայէկոնոմբանկի (8,914 քարտ), ԷյՋ-Էս-Բի-Սի Հայաստան Բանկի (7,960 քարտ), Կոնվերս բանկի (5364 քարտ), Յունիբանկի (5,081 քարտ) և Արդշինինվեստբանկի (3,948 քարտ): Միաժամանակ նշենք, որ ընթացիկ տարվա I-կիսամյակում միջին հաշվով յուրաքանչյուր ամիս թողարկվել է մոտ 8,253 քարտ (2006 թ.-ի I-կիսամյակում՝ 6,633 քարտ), իսկ մեկ ամսում մեկ բանկի կողմից՝ մոտ 458 քարտ (2006 թ.-ի I-կիսամյակում՝ 390 քարտ): Հարկ է նշել, որ վերոհիշյալ ցուցանիշի ամենամեծ արդյունքը՝ 1,496 քարտ, ապահովվել է ԱԿԲԱ-Կրեդիտ Ագրիկոլ Բանկի կողմից, 2-րդ տեղում է Հայէկոնոմբանկը (1,486 քարտ), իսկ 3-րդ տեղում՝ ԷյՋ-Էս-Բի-Սի Հայաստան Բանկը (1,327 քարտ): Վերը ասվածին միայն ավելացնենք, որ 458 թողարկման միջին ցուցանիշը գերազանցել են վերը թվարկված բանկերը:

**2007 թ. առաջին կիսամյակում թողարկված քարտերի քանակը**



Ընթացիկ տարվա առաջին կիսամյակի ընթացքում Համակարգի ակտիվ քարտերի (չրջանառության մեջ գտնվող) քանակը աճել է 31,537 քարտով կամ 22.3 %-ով, այդ թվում ArCa քարտերը աճել են 20,039 քարտով կամ 22.2 %-ով, VISA քարտերը՝ 7,547 քարտով կամ 18.9 %-ով, իսկ Master քարտերը՝ 3,951 քարտով կամ 35.1 %-ով և կիսամյակի վերջում ընդհանուր քարտերը կազմել է 173,068 քարտ (2007 թվականի հունվարի 1-ի դրությամբ՝ 141,531), այդ թվում ArCa քարտերը կազմել է 110,313 քարտ (տեսակարար կշիռը ակտիվ քարտերի կառուցվածքում՝ 63.74 %), VISA քարտերը՝ 47,533 քարտ (տեսակարար կշիռը ակտիվ քարտերի կառուցվածքում՝ 27.46 %) և Master քարտերը՝ 15,222 քարտ (տեսակարար կշիռը ակտիվ քարտերի կառուցվածքում՝ 8.8 %): Կիսամյակի ընթացքում յուրաքանչյուր ամիս միջին հաշվով գործարք է կատարվել տվյալ ամսում գործող քարտերի մոտ 65-ից 70 %-ը: Հարկ է նշել, որ ակտիվ քարտերի քանակով առաջին հնգյակը զբաղեցնում են՝ Հայէկոնոմբանկը (46,893 քարտ), ԱԿԲԱ-Կրեդիտ Ագրիկոլ Բանկը (26,609 քարտ), Արդշինինվեստբանկը (22,737 քարտ), Կոնվերս բանկը (17,938 քարտ) և Յունիբանկը (16,398 քարտ):

2007 թ.-ի հուլիսի 1-ի դրությամբ Համակարգում գործող առևտրի/սպասարկման կետերի թիվը կազմել է 1,124 կետ, այդ թվում կանխիկի տրամադրման կետերի թիվը՝ 193 կետ: Տեղին է նշել, որ անցած կիսամյակի ընթացքում Համակարգ ներգրավված գործող սպասարկման կետերի թիվը աճել է 202-ով կամ 21.9 %-ով, այդ թվում կանխիկի տրամադրման կետերի թիվը՝ 17-ով կամ 9.7 %-ով, իսկ տեղադրված POS տերմինալների թիվը՝ 233-ով կամ 22.7 %-ով, այդ թվում կանխիկի տրամադրման POS տերմինալների թիվը՝ 25-ով կամ 11.7 %-ով և կիսամյակի վերջում ArCa ցանցում գործող POS տերմինալների թիվը կազմել է 1,261 հատ, այդ թվում կանխիկի տրամադրման POS տերմինալների թիվը՝ 239 հատ: Համակարգում գործող 1,261 POS տերմինալներից 1,232-ով սպասարկվում է ArCa, 852-ով՝ VISA և 891-ով՝ Master քարտեր, ընդ որում կիսամյակի ընթացքում ArCa քարտեր սպասարկող տերմինալների թիվը ավելացել է 232-ով կամ 23.2 %-ով, VISA քարտերինը՝ 194-ով կամ 29.5 %-ով, իսկ Master քարտերինը՝ 209-ով կամ 30.6 %-ով: Վերը նշված ցուցանիշներից հետևում է, որ կիսամյակի ընթացքում յուրաքանչյուր ամիս միջին հաշվով ներգրավվել է մոտ 34 սպասարկման կետ և տեղադրվել է 39 POS տերմինալ (նախորդ տարում համանուն ցուցանիշները կազմել են համապատասխանաբար 17 և 22): Հաշվետու կիսամյակի ընթացքում Համակարգում գրանցվել է նաև 59 բանկոմատ, որոնց թիվը՝ ներառյալ համատեղ գրանցված բանկոմատները, հուլիսի 31-ի դրությամբ կազմել է 203 հատ: Ասվածին միայն ավելացնենք, որ գործող POS տերմինալների քանակով՝ ներառյալ համատեղ սպասարկվող տերմինալները, առջին հնգյակը կազմում են՝ ԱԿԲԱ-Կրեդիտ Ագրիկոլ Բանկը (446), Կոնվերս բանկը (293), Անելիք բանկը (213), Հայէկոնոմբանկը (180) և Արդշինինվեստբանկը (160):

Համակարգի անդամ բանկերի քարտերով (Համակարգի քարտերով) հաշվետու կիսամյակի ընթացքում կատարված ընդհանուր գործարքների ծավալը կազմել է 57,958.3 մլն դրամ, իսկ քանակը՝ 1,401.9 հազ. գործարք (մեկ գործարքի միջին գումարը՝ 41.3 հազ. դրամ), որը նախորդ տարվա նույն ժամանակամիջոցի ընդհանուր գործարքների ծավալը գերազանցել է 21,401.4 մլն դրամով կամ 58.5 %-ով, իսկ քանակը՝ 451.7 հազ. գործարքով կամ 47.5 %-ով, ընդ որում անկանխիկ գործարքների ծավալը գերազանցել է 2,438.6 մլն դրամով կամ 41.3 %-ով, իսկ քանակը՝ 90.3 հազ. գործարքով կամ 86.8 %-ով: Վերը նշված ժամանակամիջոցում կատարված անկանխիկ գործարքների ծավալը կազմել է 8,342.8 մլն դրամ, քանակը՝ 194.3 հազ. (մեկ գործարքի միջին գումարը՝ 42.9 հազ. դրամ), որից ինտերնետ միջավայրում կատարված գործարքների ծավալը՝ 342.7 մլն դրամ, իսկ քանակը՝ 32.2 հազ. գործարք (մեկ գործարքի միջին գումարը՝ 10.6 հազ. դրամ), և որը նախորդ տարվա առաջին կիսամյակի համանուն ցուցանիշները գերազանցել է համապատասխանաբար 237 և 166 %-ով, ընդ որում ինտերնետ միջավայրում կատարված գործարքների ծավալը կազմել է անկանխիկ գործարքների ծավալի 11.2 %-ը (նախորդ տարվա առաջին կիսամյակում նույնանուն ցուցանիշը կազմել է 6.0 %): Հաշվետու կիսամյակում նախորդ տարվա առաջին կիսամյակի համեմատ 1.8 տոկոսային կետով նվազել է ընդհանուր գործարքների ծավալում անկանխիկ գործարքների տեսակարար կշիռը և այն կազմել է 14.4 %: Ասվածին նաև ավելացնենք, որ

Համակարգի քարտերով առաջին կիսամյակի կտրվածքով յուրաքանչյուր ամիս միջին հաշվով իրականացվել է 9,659.7 մլն դրամի 233.7 հազ. գործարք (նախորդ տարվա նույն ժամանակամիջոցի կտրվածքով նույնանուն ցուցանիշները կազմել են՝ 6,092.8 մլն դրամ և 158.4 հազ. գործարք), ընդ որում Համակարգի միջազգային քարտերով ոչ Համակարգի սպասարկման կետերում՝ 1,390.1 մլն դրամի 12.9 հազ. գործարք (նախորդ տարվա առաջին կիսամյակում նույնանուն ցուցանիշները՝ 1,057.0 մլն դրամ և 8.8 հազ. գործարք):

Միաժամանակ նշենք, որ վերոնշյալ ժամանակահատվածում Համակարգի քարտերով ArCa սպասարկման ցանցում կատարված ընդհանուր գործարքների ծավալը կազմել է 49,617.7 մլն դրամ, իսկ քանակը՝ 1,324.8 հազ. գործարք (մեկ գործարքի միջին գումարը՝ 37.5 հազ. դրամ), աճը նախորդ տարվա առաջին կիսամյակի համեմատ՝ 19,403.0 մլն դրամ կամ 64.2 % և 427.4 հազ. գործարք կամ 47.6 %, ընդ որում անկանխիկ գործարքների ծավալը աճել է 81.3 %-ով կամ 1,369.7 մլն դրամով, քանակը՝ 102.1 %-ով կամ 74.5 հազ. գործարքով, կազմելով 3,053.9 մլն դրամ և 147.5 հազ. գործարք (մեկ գործարքի միջին գումարը՝ 20.7 հազ. դրամ): Հարկ է նշել, որ այս դեպքում անկանխիկ գործարքների տեսակարար կշիռը ընդհանուր գործարքների ծավալում կազմել է 6.2 %, որը անցած տարվա առաջին կիսամյակի նույնանուն ցուցանիշը գերազանցել է 0.6 տոկոսային կետով:

Ըստ քարտերի տեսակի ArCa սպասարկման ցանցում կատարված գործարքների վերաբերյալ մանրամասն տվյալները բերված են ստորև պատկերված աղյուսակում՝

ծավալը մլն դրամ, քանակը հազ. գործարք

Քարտի տեսակը		2006 թ. I- կիսամ- յակ	2007 թ. I- կիսամ- յակ	Աճը մլն դրամով	Աճը %-ով	Տես. կշիռը 2006 թ. I- կիսամյակ	Տես. կշիռը 2007 թ. I- կիսամյակ
ArCa քար- տերով գոր- ծարքներ	ծավալը	17671,8	28437,7	10765,9	60,9	58,5*	57,3*
	քանակը	622,0	910,2	288,2	46,3	69,4*	68,7*
այդ թվում անկ. գործ.	ծավալը	969,5	1736,7	767,2	79,1	5,5**	6,1**
	քանակը	39,5	84,8	45,3	114,7	6,4**	9,3**
որից ինտ. միջավայր.	ծավալը	61,7	197,4	135,7	219,9	6,4***	11,4***
	քանակը	8,2	20,6	12,4	151,2	20,8***	24,3***
այդ թվում փոխանցում	ծավալը	19,0	59,5	40,5	213,2	30,8****	30,1****
	քանակը	0,5	1,5	1,0	200,0	6,1****	7,3****
VISA քար- տերով գոր- ծարքներ	ծավալը	10393,1	16935,8	6542,7	63,0	34,4*	34,1*
	քանակը	229,8	329,9	100,1	43,6	25,6*	24,9*
այդ թվում անկ. գործ.	ծավալը	237,5	497,9	260,4	109,6	2,3**	2,9**
	քանակը	13,7	25,9	12,2	89,1	6,0**	7,9**
որից ինտ. միջավայր.	ծավալը	12,3	47,8	35,5	288,6	5,2***	9,6***
	քանակը	0,8	2,9	2,1	262,5	5,8***	11,2***
այդ թվում փոխանցում	ծավալը	8,2	33,6	25,4	309,8	66,7****	70,3****
	քանակը	0,1	0,5	0,4	400,0	12,5****	17,2****
Master քար- տերով գոր- ծարքներ	ծավալը	2137,5	4244,2	2106,7	98,6	7,1*	8,6*
	քանակը	44,9	84,8	39,9	88,9	5,0*	6,4*
այդ թվում անկ. գործ.	ծավալը	448,0	932,1	484,1	108,1	21,0**	22,0**
	քանակը	19,1	38,9	19,8	103,7	42,5**	45,9**
որից ինտ. միջավայր.	ծավալը	27,7	97,5	69,8	252,0	6,2***	10,5***
	քանակը	3,2	8,6	5,4	168,8	16,8***	22,1***
այդ թվում փոխանցում	ծավալը	1,9	19,8	17,9	942,1	6,9****	20,3****
	քանակը	0,05	0,3	0,3	500,0	1,6****	3,5****
Ընդ. գոր- ծարքներ	ծավալը	30202,4	49617,7	19415,3	64,3		
	քանակը	896,7	1324,9	428,2	47,8		
այդ թվում անկ. գործ.	ծավալը	1655,0	3166,7	1511,7	91,3	5,5**	6,4**
	քանակը	72,3	149,6	77,3	106,9	8,1**	11,3**
որից ինտ.	ծավալը	101,7	342,7	241,0	237,0	6,1***	10,8***

միջավայր.	քանակը	12,2	32,1	19,9	163,1	16,9***	21,5***
այդ թվում փոխանցում	ծավալը	29,1	112,9	83,8	288,0	28,6****	32,9****
	քանակը	0,7	2,3	1,7	253,8	5,3****	7,2****

\* տեսակարար կշիռը հաշվարկված է ընդամենը գործարքների նկատմամբ.

\*\* տեսակարար կշիռը հաշվարկված է համապատասխան ընդամենը գործարքների նկատմամբ.

\*\*\* տեսակարար կշիռը հաշվարկված է համապատասխան անկանխիկ գործարքների նկատմամբ.

\*\*\*\* տեսակարար կշիռը հաշվարկված է ինտերնետով համապատասխան գործարքների նկատմամբ:

Ինչպես երևում աղյուսակից, ArCa ցանցում Համակարգի քարտերով իրականացված ընդհանուր գործառնությունների ծավալում ArCa քարտերով իրականացված գործառնությունների մասնաբաժինը կազմել է 57.3 %, VISA քարտերինը՝ 34.1 % և Master քարտերինը՝ 8.6 %:

Տեղին է նաև արձանագրել, որ ArCa սպասարկման ցանցից դուրս Համակարգի քարտերով կատարված գործարքների ծավալը կազմել է 8,340.6 մլն դրամ, իսկ քանակը՝ 77.1 հազ. գործարք (մեկ գործարքի միջին գումարը՝ 108.2 հազ. դրամ), աճը նախորդ տարվա առաջին կիսամյակի համեմատ՝ 1,998.4 մլն դրամ կամ 31.5 % և 24.3 հազ. գործարք կամ 46.0 %, ընդ որում անկանխիկ գործարքների ծավալը աճել է 25.3 %-ով կամ 1,1,068.9 մլն դրամով, քանակը՝ 51.0 %-ով կամ 15.8 հազ. գործարքով, կազմելով համապատասխանաբար 5,288.9 մլն դրամ և 46.8 հազ. գործարք (մեկ գործարքի միջին գումարը՝ 113.0 հազ. դրամ): Այս դեպքում անկանխիկ գործարքների տեսակարար կշիռը ընդամենը գործարքների ծավալում կազմել է 63.4 %, որը անցած տարվա առաջին կիսամյակի համանուն ցուցանիշին զիջել է 3.1 տոկոսային կետով:

ArCa սպասարկման ցանցում 2007 թ.-ի առաջին կիսամյակի ընթացքում ընդհանուր գործարքների ծավալը նախորդ տարվա նույն ժամանակահատվածի համեմատ աճել է 20,758.0 մլն դրամով կամ 60.4 %-ով, իսկ քանակը՝ 448.5 հազ. գործարքով՝ կազմելով համապատասխանաբար 55,137.7 մլն դրամ և 1,378.9 հազ. գործարք (մեկ գործարքի միջին գումարը՝ մոտ 40.0 հազ. դրամ), ընդ որում անկանխիկ գործարքների ծավալը կազմել է 5,247.2 մլն դրամ (տես. կշիռը ընդհանուրում՝ 9.5 %), իսկ քանակը՝ 171.7 հազ. գործարք, գրանցվել է աճ համեմատելի ժամանակամիջոցի նկատմամբ՝ ծավալը աճել է 1,803.9 մլն դրամով կամ 52.4 %-ով, քանակը՝ 85.2 հազ. գործարքով կամ 98.5 %-ով: Ընդհանուր գործարքների ծավալում 5,520.0 մլն դրամը կամ մոտ 10 %-ը, ինչպես նաև ընդհանուր քանակում 54.0 հազ. գործարքը կամ 3.9 %-ը կազմել են ոչ Համակարգի քարտերով կատարված գործարքների մասնաբաժինը (մեկ գործարքի միջին գումարը՝ մոտ 102.0 հազ. դրամ), որոնց աճը համեմատելի ժամանակամիջոցի նկատմամբ համապատասխանաբար կազմել է՝ 1,342.7 մլն դրամ կամ 32.1 % և 20.3 հազ. գործարք կամ 60.2 %: Վերոնշյալ ժամանակամիջոցում ոչ Համակարգի քարտերով կատարված անկանխիկ գործարքների ծավալը կազմել է 2,080.5 մլն դրամ (տես. կշիռը ոչ Համակարգի քարտերով կատարված գործարքների ծավալում՝ 37.7 %), քանակը՝ 22.1 հազ. գործարք, որոնք համեմատելի ժամանակամիջոցի համանուն ցուցանիշները գերազանցել են 16.3 և 55.6 %-ով: Կարելի է նաև ավելացնել, որ առաջին կիսամյակի կտրվածքով յուրաքանչյուր ամիս միջին հաշվով իրականացվել է 9,189.6 մլն դրամի 229.8 հազ. գործարք (նախորդ տարվա նույն ժամանակամիջոցի կտրվածքով համանուն ցուցանիշները կազմել են՝ 5,730.0 մլն դրամ և 155.1 հազ. գործարք), ընդ որում ոչ Համակարգի միջազգային քարտերով Համակարգի սպասարկման կետերում՝ 920.0 մլն դրամի 9.0 հազ. գործարք (նախորդ տարվա առաջին կիսամյակում նույնանուն ցուցանիշները՝ 696.2 մլն դրամ և 5.6 հազ. գործարք):

Հաշվետու կիսամյակում Համակարգի բանկոմատներով կատարվել է նաև 221.1 մլն դրամի 29.3 հազ. անկանխիկ գործարք (կոմունալ վճարումները), որը 66.7 մլն դրամով կամ 43.2 %-ով և 7.0 հազ. գործարքով կամ 31.4 %-ով ավելի է նախորդ տարվա նույն ժամանակում կատարված գործարքների ծավալից և քանակից: